ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ.— Աչկ. Վանական վրդի. 1241 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. որ աղօթականութեան աղագաւ երթեալ էր յԵրուսաղէմ երկրպագել Ս. Տեղեացն (Կիրակոս, էջ 174)։ Երուսաղէմէ վերադարձին կը հանդիպի Կիլիկիա ուր կ'արժանանայ կթղ.ին և թագաւորին մասնաւոր մեծարանքին։ Վարդանի գործերուն և երկասիրութիւններուն մասին տեսնել (Հայապատում, էջ 108—9)։

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԲԱՂԻՇԵՑԻ.— Հայրը Եղիա, մայրը Ղարիպ, եղբայրները Խաչատուր և Խոշխապար, աչկ. Բաղիշեցի Խաչատուր վրդ.ի (✻ 1662) (Արարատ, 1891, էջ 149). վանահայր Բաղէշի Ամրտօլու վանքին. ուսուցիչ Գրիգոր Շղթայակիր և Յովհաննէս Կոլոտ պատրիարքներու և ուրիշներու, իրաւամբ կոչուած է գերազանցեալ վարժապետ. Մշոյ Ճիկրաշէն թաղի Ս. Կիրակոս եկեղեցիին Ճաշոցին մէկ յիշատակարանին մէջ, Յովհաննէս գրիչ՝ անոր աշակերտը կը յիշատակէ թէ Վարդան վրդ. 1684 ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը իր տասնևեօթն աշակերտներով, և ուխտը կատարելէ վերջ՝ դարձած է իր աթոռը (Դիւան, Գիրք Ժ. էջ ԼԵ—ԼԶ). 1653 թուականին իր ձեռագիր Խորհրդատետրը յիշատակ տուած է Ս. Յակոբի վանքին։ Վարդան վրդ.ի աշակերտ Գրիգոր հետևեալ կերպով կ'աւանդէ իր վարժապետի կեանքը.

«...Վարդան արհին յոյժ պանծացեալ,
Մաքուր վարուքն սրբասնեալ
Եւ վարժապետն գերազանցեալ,
Որ յԱմրտօլ վանքն էր նստեալ.
Ի Խոզց քաղաքէ կոչեցեալ
Եւ դպրատուն անդր բացեալ.
Բազում որդիս ի փառս ածեալ։
Որբոց տնանկաց էր խնամակալ
Եւ աղքատաց հայր նա գտեալ,
Եւ անձանձիր յերկս աշխատեալ,
Զեկեղեցիս յոլովս շինեալ։
Իսկ և վարուք յոյժ մաքրացեալ,
Հոգւով, մարմնով արիացեալ.
Ի պահս, յաղօթս էր նա ժուժկալ